

**ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԵՎ «ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ»**

Համաբարբառները, ներկայացնելով երկուս գործածված բոլոր բառերը բնագրային համապատասխան վկայություններով, կարևոր նշանակություն ունեն լեզվական տարբեր իրողությունների քննության համար:

Համաբարբառային գրականության էությունը տարբեր կամ միևնույն բնագրի մեջ առկա նմանություններն ի հայտ բերելն է: Ըստ այդմ՝ այն զարգացել է երկու հիմնական փուլերով, որոնցից առաջինը, ժամանակագրական կարգով, իմաստային նմանություններն ի հայտ բերելն է եղել, երկրորդը՝ լեզվաքերականական նմանությունները բացահայտելը՝ երևան հանելով բնագրերի այն հատվածները, որոնցում գործածվել են միևնույն բառերը:

Սկզբնավորվելով սուրբգրային ուսումնասիրություններից՝ համաբարբառային գրականությունն իր դարավոր զարգացման ընթացքում պահպանել է սկզբնական նկարագիրն ու նշանակությունը՝ որպես Աստվածաշունչ մատյանի մաս կազմող գրքերի համեմատական ուսումնասիրության բնագավառ: ԺԸ դարից սկսած, դուրս գալով կրոնական նեղ շրջանակից, ընդգրկել է նաև աշխարհիկ գրականությունը՝ դառնալով հայտնի գրողների և գիտնականների գործերի բնագրային ուսումնասիրության գիտական յուրահատուկ բնագավառ:

Հայ համաբարբառային գրականությունը ևս սկզբնապես ընթացել է սուրբգրային բնագրերի հետազոտությունների ուղղությամբ, իսկ երկրորդ շրջանը նշանավորվեց գեղարվեստական գրականության ներկայացուցիչների երկերի համաբարբառների ստեղծումով<sup>1</sup>:

Հայ բառարանագրության պատմության մեջ Ստեփանոս Ռոքշայի «Գանձ հայոց լեզուի» բառարանն առաջինն է, որում յուրաքանչյուր բառի դիմաց վկայություններ են բերվում հայ մատենագրական աղբյուրներից: Թեպետ շատ սահմանափակ էին հայալեզու մատենագրությունից նրա ընդգրկած աղբյուրները, սակայն Ռոքշայով է սկսվում հայ մատենագրությունից հատվածներ քաղելու, դրանք ի մի բերելու և բառաքնության ու բառարանագրության համար օգտագործելու գաղափարը: Այսպես նաև սկզբնավորվեց մատենագրական ընդհանուր համաբարբառ ունենալու գաղափարը:

---

<sup>1</sup> **Հ. Անասյան**, *Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը*, Է, 1971, էջ 50:

Այս առումով ավելի խոշոր դերակատարում ունեցան Վենետիկում հաստատված Մխիթարյան միաբանության անդամներն իրենց բեղմնավոր գիտական գործունեությամբ: Մ. Սեբաստացու և նրա աշակերտների քրտնաջան աշխատանքով ստեղծված «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանում մատենագրական աղբյուրների թիվն անհամեմատ մեծ է: Այդ բառարանի հիման վրա ստեղծված «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեջ բնագրային օրինակները բերվում են թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական մատենագրական աղբյուրներից: Մատենագրության ընդհանրական համաբարբառ ստեղծելու գաղափարը Մխիթարյան միաբանության այրերը չկարողացան իրականացնել, քանի որ գրական աղբյուրներից հսկայածավալ նյութի հավաքումը, ստուգումը, համալրումը կպահանջեր մի քանի տասնամյակ<sup>2</sup>:

Հայ մատենագրության ընդհանուր համաբարբառի ստեղծման հաջորդ կենտրոնը Հայկ. ՄՍՀ Գիտությունների ակադեմիան է: Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ այդ աշխատանքների հիմքը դրվեց ակադեմիայի լեզվի ինստիտուտում 1957 թվականին աշխարհաբար և գրաբարալեզու քարտարաններ կազմելու ծրագրով. հետագայում գործը տեղափոխվեց ակադեմիայի կենտրոնական գրադարան: 1957-1962 թվականներին վիթխարի աշխատանք է ծավալվել լեզվի ինստիտուտում ժամանակակից հեղինակների երկերի քարտարաններ կազմելու ուղղությամբ: Հեղինակային քարտարաններ կազմելու համար յուրաքանչյուր երկ մշակվում էր առանձին. դրանում գործածված բառերը գրվում էին քարտերի վրա, որոնք դասավորվում էին այբբենական կարգով: Այդ բառաքարտերի վրա էջանշումով բերվում էին գրքի այն բոլոր հատվածները, որոնցում գործածվում է տվյալ բառը: Երբ այս եղանակով ստեղծվում են բոլոր երկերի քարտերը, կազմվում է գրողի երկերի համաբարբառային լիակատար քարտարանը:

Թեպետ հնարավոր չեղավ ստեղծել ժամանակակից հեղինակների երկերի լիակատար համաբարբառ, սակայն այդ քարտարանի կարևորությունն այնքան մեծ էր, որ դրանում եղած բնագրային օրինակների հիման վրա 1969 թվականին ինստիտուտում ստեղծվեց «Ժամանակակից հայոց լեզվի» քառահատոր բառարանը: Հետագայում կազմվեցին ժամանակակից մի շարք հեղինակների համաբարբառ-բառարաններ: 1960 թվականից լեզվի ինստիտուտում սկսվեց նաև գրաբարալեզու հեղինակների երկերի քարտագրումը (Եզնիկ, Կորյուն, Սեբեոս և այլն): Գրադարանին առընթեր ստեղծվեց նոր բաժին՝ համաբարբառային քարտարանի բաժինը, որի նպատակն էր հայ հին գրական-

---

<sup>2</sup> **Հ. Անասյան**, *Հայ համաբարբառային գրականությունը եւ հայ մատենագրության համաբարբառը*, Է., 1972, էջ 56:

նության քարտարանի կազմումը: Ծրագիրը ներառում էր գրաբարալեզու ողջ մատենագրությունը<sup>3</sup>:

Հայկական համաբարբառի խմբի բեղմնավոր գործունեության ընթացքում ստեղծվել են գրաբարալեզու ինքնուրույն և թարգմանական գրականության բոլոր խոշորագույն ներկայացուցիչների երկերի բնագրային համաբարբառները: *Հայկական համաբարբառն* իր կատարած հսկայածավալ աշխատանքով կարևոր դեր է խաղացել հայ բառարանագրության պատմության մեջ:

Հայ համաբարբառային գրականության հաջորդ կարևոր փուլը նշանավորվեց **Հայ մատենագրության էլեկտրոնային համաբարբառ** մեծածավալ շտեմարանի ստեղծումով, երբ մշակվեց և իրականացվեց հայ գրականության էլեկտրոնային համաբարբառ ստեղծելու գաղափարը: Առանց տեխնիկական որևէ օժանդակության՝ նախկինում կատարվել էր հսկայական աշխատանք, սակայն արդի փուլում հայ գրականության ընդհանուր համաբարբառ ունենալու գաղափարն իրականացնելու, համաբարբառների կազմման աշխատանքները նոր մակարդակի հասցնելու տեսակետից մեծապես կարևորվում է համակարգչային բառարանագրության պահանջներին համապատասխան էլեկտրոնային համաբարբառների ստեղծումը: Այս առումով [concordance.am](http://concordance.am) կայքում գործող **Հայ մատենագրության էլեկտրոնային համաբարբառը** կարող է փոխարինել կիրառության տեսակետից սահմանափակ հնարավորություններ ունեցող նախկին մեքենագիր համաբարբառներին:

Ընդհանուր առմամբ՝ հայ մատենագրության էլեկտրոնային համաբարբառի ստեղծման գաղափարը նպատակահարմար է իրականացնել երկու փուլով: Առաջին փուլում պետք է կազմել հեղինակների երկերի բառաբնագրային համաբարբառները. երկում գործածված ողջ բառապաշարը ներկայացնել այբբենական կարգով հիպերտեքստային հղումներով: Հղումներով այցելելիս կարելի է գտնել բառաձևի գործածության քանակը և օրինակները բնագրում: Այս փուլում էլեկտրոնային համաբարբառների կազմման ողջ աշխատանքը հնարավոր է իրականացնել մեքենական եղանակով:

Էլեկտրոնային համաբարբառի ստեղծման երկրորդ փուլում պետք է մշակել էլեկտրոնային բառահոդված՝ բառի թեքված ձևերը ներկայացնել խմբավորված՝ բառարանային ուղիղ ձևի կողքին, առանձնացնել արտահայտությունները, դարձվածքները, հարադրությունները և այլն: Եթե էլեկտրոնային համաբարբառների կազմման առաջին փուլը հնարավոր է ամբողջությամբ

---

<sup>3</sup> **Հ. Անասյան**, *Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը*, Է., 1971, էջ 61-63:

մեքենայացնել, երկրորդ փուլում բառացանկի մշակումը, համաբարբառի խմբագրումը պետք է իրականացվի լեզվաբանների կողմից:

[concordance.am](http://concordance.am) կայքում ներկայացված էլեկտրոնային համաբարբառները տարբերվում են բնագրային համաբարբառներից: Այդ տարբերությունները վերաբերում են *հեղինակների ընտրությանը և նրանց երկերի ընդգրկման ծավալին, բառահոդվածի կազմությանն ու ներկայացման եղանակներին*, ինչպես նաև լեզվական տարբեր իրողությունների քննության ժամանակ համաբարբառների կիրառության հնարավորություններին:

Նախկինում ստեղծվել են առավելապես դասական և հետդասական շրջանի գրաբարագիր ինքնուրույն և թարգմանական գրականության ներկայացուցիչների երկերի բնագրային համաբարբառներ: Սակավաթիվ են միջին հայերեն երկերի համաբարբառները: Քիչ են նաև աշխարհաբար երկերի համաբարբառները: Անհրաժեշտ չափով ուշադրություն չի դարձվում ժամանակակից հեղինակների երկերի համաբարբառների կազմմանը, որոնք կարևոր են ոչ միայն նրանց լեզվի ու ոճի քննության, այլև լեզվում կատարվող փոփոխությունների ուսումնասիրության տեսակետից: Հետևաբար, էլեկտրոնային համաբարբառում կարևորվել է ներառել լեզվի պատմության տարբեր շրջաններն ընդգրկող հնարավորինս մեծ թվով հեղինակներ:

Նախորդ շրջանում կազմվել են հեղինակի միայն գլուխգործոցային համարվող երկերի համաբարբառները, որոնք բավարար չեն նույնիսկ տվյալ հեղինակի լեզվի և ոճի լիարժեք ու առավել ամբողջական քննության համար: Ուստի էլեկտրոնային համաբարբառում կարևորվում է հեղինակի բոլոր երկերի համաբարբառները ներկայացնելու հանգամանքը: Յուրաքանչյուր համաբարբառի կազմման համար պետք է հիմք ընդունել հեղինակի երկերի ակադեմիական հրատարակությունը՝ չնայած այն հանգամանքին, որ տարբեր երկեր կարող են հրատարակվել մի քանի անգամ ինչպես առանձին գրքերով, այնպես էլ որևէ ընդհանուր հատորով:

Բնագրային և էլեկտրոնային համաբարբառների տարբերություններն առավելապես նկատելի են բառահոդվածի կառուցվածքի, բառի և բառաձևերի ներկայացման սկզբունքներում:

Ինչպես հայտնի է, համաբարբառները բաժանվում են երկու խմբի՝ քերականական և բնագրային: Քերականական առաջին համաբարբառը 1969 թվականին հրատարակված Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի համաբարբառն է, որը կազմվել էր 1919 թվականին Թիֆլիսում լույս տեսած քննական բնագրի հիման վրա: Քերականական համաբարբառներում երկի բառապաշարը (ներառյալ նախդիրներն իրենց հոլովական գործածություններով) ներկայացվում է հետևյալ կերպ. բառի ուղիղ ձևի կողքին ներկայաց-

վում են նրա քերականական գործածության տարբեր ձևերը և յուրաքանչյուր ձևի կողքին նշվում է, թե բնագրի որ էջում է այն գործածվել:

Հետագայում համաբարբառ կազմողները, նկատելով բառաքերական համաբարբառների ոչ գործնական և նպատակահարմար լինելը, հանգեցին միայն բնագրային համաբարբառներ կազմելու մտքին: Բնագրային համաբարբառների առաջին օրինակելի նմուշը Եզնիկի երկի համաբարբառն է, որի բառահոդվածում ներկայացվում է գլխաբառը և դրա գործածության բոլոր օրինակները բնագրային համապատասխան վկայություններով:

Բնագրային համաբարբառում բառահոդվածն ունի հետևյալ կառուցվածքը՝

ԱԺԵՆԱԼ - Բայց թե երեցն անպատեհ իրք ուզէ ի ծխէն կան քըշտէ, նա եպիսկոպոսն եւ դատաւորք եկեղեցոյն արգելէն զժողովուրդն եւ զժամն մինչեւ ապաշխարէ զինչ ցեղ որ մեղանքն ածենայ: - 55. Ապա թե կինն լինի խաբել զցուլն՝ նա խրատն ու մեծ տուգանք ի կնկանն դեհն է. ու այրկանն կամաւք խրատվի կինն՝ 10 քանի նորա ձետն ածենայ, եւ այս քիթն լինի: - 96. Եւ թե կուրցնէ՝ նա զինչ ածենայ անասունն՝ նա ի չորս բաժնէն մէկն է տուգանքն – 169.<sup>4</sup>

Էլեկտրոնային նոր համաբարբառում բառահոդվածի կառուցվածքը մշակելիս հաշվի են առնվել քերականական և բնագրային համաբարբառներում եղած բացթողումները: Ըստ այդմ՝ էլեկտրոնային համաբարբառը կարող է համարվել և՛ քերականական, և՛ բնագրային: Դրանում բառաձևերը հնարավոր է ներկայացնել տեքստից առանձին, համակարգված, ինչպես քերականական համաբարբառներում, և բնագրային օրինակներով, ինչպես բնագրային համաբարբառներում:

Էլեկտրոնային համաբարբառում այբբենական կարգով դասավորվում են երկում գործածված բոլոր բառերը հիպերտեքստային հղումներով: Թեքվող խոսքի մասերի, ինչպես նաև փոխանվանաբար գործածված բառերի դեպքում բառի բառարանային ուղիղ ձևի կողքին ներկայացվում են երկում գործածված մյուս թեքված ձևերը: Բառաձևերի գործածության օրինակները տվյալների հենքից ընտրվում և ներկայացվում են մեքենական եղանակով ամբողջական պարբերությամբ՝ նշելով բառաձևի գործածության քանակը՝

---

<sup>4</sup> Ս. Սյարապետ, *Դատաստանագիրք*, Ե, 2019, էջ 7 (կազմող՝ Լ. Ա. Գուլգազարյան):

## ԱՅՏ

**«Այտ» բառն ուղիղ ձևով գործածված չէ:**

**«Այտերը» բառաձևը երկուս գործածվել է 1 անգամ:**

Քեզ նայեմ այնպես,  
Կարծես առաջին անգամն եմ տեսնում:  
Ախ, այդ քո շիկնած [այտերը](#) մաքուր՝  
Քո թուխ մազերով լուսապսակված:  
Եվ քո շուրթերը...

**«Այտերին» բառաձևը երկուս գործածվել է 1 անգամ:**

Եվ քո շուրթերը...  
Ինչու է թվում,  
Թե քո [այտերին](#) - առաջին անգամ-  
Հավելը նույնքան դժվար է հիմա,  
Որքան որ հնում հավատափոխման - դարձի բերումը,  
Եվ քեզ համբուրելն - առաջին անգամ...

Ինչպես տեսնում ենք, բնագրային և էլեկտրոնային համաբարբառներում բառահոդվածի կազմության սկզբունքները տարբեր են: Կարելի է ասել, որ երկի *բառապաշարի ուսումնասիրության* դյուրության տեսակետից նախընտրելի են էլեկտրոնային համաբարբառները, որտեղ ներկայացված է այբբենական կարգով դասավորված բառացանկը՝ առանց բնագրային օրինակների: Մինչդեռ բնագրային համաբարբառներում երկի բառապաշարին ծանոթանալու համար պետք է կարդալ ամբողջ համաբարբառը:

*Բառաձևերի ուսումնասիրության* տեսակետից նույնպես նախընտրելի են էլեկտրոնային համաբարբառները, քանի որ դրանցում բառի ուղիղ և թեքված ձևերը ներկայացվում են համակարգված: Մինչդեռ բնագրային համաբարբառներում բառի թեքված ձևերը ներկայացվում են ոչ թե առանձին և խմբավորված, այլ բնագրային օրինակներով: Սա զգալիորեն սահմանափակում է համաբարբառի օգտակարությունը բառաձևերի քնության հարցում, քանի որ հետազոտողը ստիպված է կարդալ բոլոր օրինակները՝ բառաձևերը գտնելու, դրանց գործածությանը ծանոթանալու, ինչպես նաև պարզելու համար, թե քերականական միևնույն իմաստն արտահայտող զուգահեռ ձևերից որը հաճախակի կիրառություն ունի: Ընդ որում՝ բնագրային համաբարբառներում բա-

ռաձևերի ներկայացման սկզբունքները միասնական չեն: Երբեմն բառաձևերը ներկայացվում են ըստ հոլովաձևերի, երբեմն էլ՝ գործածության էջերի:

Բնագրային համաբարբառներում բառաձևերի գործածության օրինակները բերվում են կիսատ՝ հիմնականում կարճ բառակապակցություններով. հետագոտողը համաբարբառում վկայված բառի իմաստը հասկանալու համար պետք է կարդա քնագիրը: Առավել լուրջ է *նախադասության հնչեքանգային և կառուցվածքային տիպերի ուսումնասիրության* խնդիրը, քանի որ բնագրային համաբարբառներում լեզվական փաստերը ամբողջական նախադասություններով գրեթե չեն ներկայացվում: Որոշ համաբարբառներում էլ բառաձևերի գործածության քանակը կամ չի նշվում, կամ նշվում է սխալ: Մինչդեռ էլեկտրոնային համաբարբառներում բառաձևերի գործածության օրինակները տվյալների հենքից ընտրվում և ներկայացվում են ամբողջական պարբերությամբ՝ նշելով յուրաքանչյուր բառաձևի գործածության քանակը:

Բնագրային համաբարբառներում ոչ բոլոր *հարադրություններն ու դարձվածքներն են ներկայացվում* որպես առանձին բառահոդված: Եթե էլեկտրոնային համաբարբառում բառացանկի օգնությամբ հետագոտողը կարող է տեքստից առանձնացնել բոլոր հարադրություններն ու դարձվածքները, բնագրային համաբարբառների դեպքում հետագոտողը բնագրի հետ ուղղակիորեն աշխատելու հնարավորություն չունի: Ստացվում է, որ կամ հետագոտողն ինքը պետք է քնագրից առանձնացնի բոլոր կապակցությունները, կամ իր ուսումնասիրությունից դուրս թողնի այն բոլոր արտահայտությունները, որոնք համաբարբառ կազմողը չի ընդգրկել համաբարբառում:

Բնագրային համաբարբառներում, որպես կանոն, նշվում են *բառաձևերի գործածության էջերը*: Պետք է նկատել, սակայն, որ շատ համաբարբառներում նշված չէ, թե երկի որ թվականի հրատարակությունն է ընկած տվյալ համաբարբառի կազմության հիմքում:

Էլեկտրոնային համաբարբառներում ևս կարող են նշվել բնագրում լեզվական օրինակների գործածության էջերը, եթե երկը էջակալված է: Սակայն քանի որ էլեկտրոնային տեքստերը չեն էջակալվում, բնագրերի էջակալման փոխարեն կարելի է նշել դրանց URL հասցեն, իսկ օրինակները փնտրել որոնման համակարգով:

Բնագրային և էլեկտրոնային համաբարբառների միջև եղած նկատելի տարբերությունները վերաբերում են ոչ միայն բառահոդվածի կառուցվածքին, այլև համաբարբառի կազմման ողջ գործընթացին: Համեմատության համար միայն նշենք, որ ավանդական եղանակով համաբարբառի կազմման համար պահանջվում է երկարատև աշխատանք. համաբարբառ կազմողը ամբողջ երկը վերածում է բառաձևերի ցանկի, առանձնացնում բառաձևի գործածու-

յան օրինակները, դասակարգում, խմբավորում, ներկայացնում այբբենական կարգով, հաշվում յուրաքանչյուր բառաձևի գործածության քանակը: Երկի էլեկտրոնային համաբարբառի կազմման ժամանակ դրանք արվում են մեքենական եղանակով: Համաբարբառների կազմման մեքենայացման արդյունքում համաբարբառ կազմելիս մնում է միայն *հոլովման և խոնարհման ընդհանուր կանոններից շեղվող բառաձևերը* խմբավորել բառարանային ուղիղ ձևի կողքին, առանձին բառահոդված դարձնել *հատուկ անունները, հարադրությունները, արտահայտություններն ու դարձվածքները*, գրաբար տեքստերում՝ *առանձնացնել կից գրվող նախդիրները*:

Ցանկանում ենք ընդգծել, որ [concordance.am](http://concordance.am) կայքում ներկայացված բոլոր համաբարբառները կազմվել են **մեքենական եղանակով**: Երբեմն բառի թեքված ձևերը բառարանային ուղիղ ձևի կողքին ներկայացված չեն, արտահայտություններն ու դարձվածքներն առանձնացված չեն, քանի որ հայ մատենագրության ընդհանրական էլեկտրոնային համաբարբառի ստեղծումը ենթադրում է հսկայական և երկարատև աշխատանք:

Hakobyan Frida - Textual concordances and "The electronic concordance of the Armenian literature". - Armenian literature of concordances has a rich history, but one of its breakthrough stages was marked by the creation of a large Armenian electronic concordance available on concordance.am website. The electronic concordances presented on concordance.am are advantageously distinguished from both typographical, printed concordances and foreign-language electronic concordances. Those differences refer to the choice of authors, the structure and presentation of the headword.

Акопян Фрида - Текстовые конкордансы и «Электронный конкорданс армянской литературы». - Армянская литература конкордансов имеет богатую историю, но одна из ее прорывных этапов ознаменовалась созданием большого армянского электронного конкорданса на сайте concordance.am. Электронные конкордансы, представленные на concordance.am, выгодно отличаются от типографских, печатных конкордансов и электронных конкордансов на иностранном языке. Эти различия относятся к выбору авторов, составлению и представлению слова.